ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» Դեկտեմբերի 2024թ. ՆՄՈ/534 -Ա

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2024 թվականի N 02/11.7/36008-2024 գրությունը «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության առողջացման ծրագրի կազմման և մշտադիտարկման աշխատանքներն իրականացնելու նպատակով

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ասթինե Ապիտոնյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին և հաշվապահին (համաձայնությամբ):
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ասթինե Ապիտոնյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկամսյա ժամկետում և

արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Դավիթ Թունանյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-11-13 12:49:58 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԿ-ի կողմից

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2024 թվականի նոյեմբեր 13-ի
ՆՄՈ/534-Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական
ոլորտի հարցերի վարչության պետ՝ Ասթինե Ապիտոնյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
աշխատակզմի ֆինանսական վարչության պետ՝ Վարազդատ Մկրտչյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ՝ Լիաննա Հարությունյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
աշխատակզմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման
բաժնի պետ-գլխավոր հաշվապահ՝ Արայիկ Հակոբյան

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 13.11.2024 10:37:00 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023